



Սայաթ Նովա

Շատ սիրուն իս Շախաթայի

Էս դիվանին խիստ լավն է, օվ օր սովրի օղորմի ասի:
Հիմի գուգիմ թե հայեվար ասիմ: Ամեն աստուծ,
յիս՝ նրդրսու վուրթի Արութինս,
պրստուց ինչրու յառսուն տար՛ին գլուխ դրի ամենան խաղին,
ամա սուրբ Կարապիտի կարողութենով սովրեցա քամանչեն ու չոնգուրն ու
թամբուրեն:

Շատ սիրուն իս, Շախաթայի, ասողին՝ խար չիս անի.
Անշաղ գրցիս էշխի մեչը, յիդ կեհաս՝ քար չիս անի:

Էշխը հեստի կրրակ ունի՝ վո՛նց կու էրվի, վո՛նց կերթա.
Թեգուզ նրնգիմ ծովի մեչը՝ հովնալու ճար չիս անի:

Բաս աշուղը վունց դիմանա էտ քու տրված կեծակուն,
Դու ինքնակալ թաքավոր իս՝ բեհուբագառ չիս անի:

Թե վուր սարերուն հանդիբիս, կու հալիս մումի նըման.
Թե վուր քաղաք տիղ հանդիբիս, կու քանդիս, վար չիս անի:

Իսկի բեհուբագար չունի Շախաթայի չասողը.
Էնդու համա, Սայաթ Նովա, Էհտիբար չիս անի: